Հովունի

Հովունի բնակավայրի վարչական տարածքը կազմում է 846.45հա իսկ բնակչությունը 654 մարդ: Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 13կմ հեռավորության վրա: Բնակավայրը գտնվում է Շիրակի դաշտում՝ Ախուրյան գետի աջ ափին՝ ծովի մակարդակից 1750մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: